



Հաստատում եմ՝
Խ. Արդույ Համիդի անվան ՀՊԱՀ ռեկտոր
պրոֆեսոր Սրբուհի Գևորգյան
02.05.2024

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Տաթևիկ Վասակի Հակոբյանի «Սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի արտացոլումը թուրքական պատմագրության մեջ (XX դ. II քառորդ – XXI դ. սկիզբ)» թեմայով Է.00.05 – «Պատմագիտություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է թուրքական պատմագրության մեջ Օսմանյան կայսրության սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի արտացոլմանը: Աբդուլ Համիդ II-ի կառավարման ժամանակաշրջանը կարևոր փուլ է ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ հայոց պատմության տեսանկյունից: Նրա օրոք Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին քաղաքական կյանքում տեղի ունեցան մի շարք կարևոր իրադարձություններ՝ սահմանադրական միապետության հռչակումը, 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը ու դրա հետևանքները, խոշոր տերությունների ազդեցության համար պայքարի սրումը, Օսմանյան կայսրության քրիստոնյա ազգերի ազգային-ազատագրական պայքարի վերելքը և այլն: Այս համատեքստում միջազգայնացվեց Հայկական հարցը և ներկայացվեցին հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման ծրագրեր: Աբդուլ Համիդ II-ի կառավարման շրջանում տեղի ունեցան հայկական կոտորածները և փաստացի դրվեց օսմանյան ցեղասպանության քաղաքականության սկիզբը: Ուստի, սուլթանի թե՛ անձի, թե՛ նրա կառավարման շրջանի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի մեր պատմագիտության համար: Աբդուլ Համիդ II-ի անձն ու կառավարման ժամանակաշրջանը շարունակում են գտնվել նաև թուրք պատմաբանների ուշադրության ներքո: Մյուս կողմից,

Թուրքիայի ներկա իշխանությունների, հատկապես նախագահ Ռ. Թ. Էրդողանի առանձնահատուկ վերաբերմունքն այդ սուլթանի նկատմամբ հիմք է հանդիսացել Աբդուլ Համիդի կառավարման շրջանի բազմաթիվ հարցերի ուսումնասիրման և նորովի ներկայացման ու մեկնաբանման համար: Վերոնշյալի համատեքստում ատենախոսը կարողացել է ներկայացնել ու հիմնավորել թեկնածուական ատենախոսության արդիականությունը:

Ատենախոսը հիմնավորել է նաև հետազոտության գիտական նորույթը: Այստեղ կարող ենք առանձնացնել հետևյալ մոտեցումը: Մեր օրերում Թուրքիայում տեղի է ունենում Աբդուլ Համիդի կերպար ընկալման փոխակերպում և օսմանյան անցյալի հերասականացում: Միաժամանակ նվազեցվում է Աթաթյուրքի դերը թուրքական պետականության պատմության մեջ՝ զուգահեռաբար բարձրացնելով Էրդողանի դերակատարումը: Ահա այս խնդիրն է, որ համապարփակ գիտական ուսումնասիրության չի ենթարկվել թուրքական պատմագրության մեջ:

Ատենախոսը հստակորեն ձևակերպել է հետազոտության նպատակը և խնդիրները՝ իրավացիորեն մատնանշելով թուրքական պատմագրության մեջ սուլթան Աբդուլ Համիդ II-ի գործունեության ներկայացման ոճի և շեշտադրումների փոխակերպմանը, որոնք ուղղակիորեն կապված են թուրքական պետության ներսում տեղի ունեցող գաղափարական և գաղափարխոսական գործընթացների հետ:

Ատենախոսն օգտագործել է հարուստ գրականություն՝ հուշագրություններ, համացանցային նյութեր, հայ, թուրք և այլ հեղինակների աշխատություններ:

Պետք է նշել ատենախոսության թեմայի կիրառական նշանակության մասին: Այն օգտակար հետազոտություն է ոչ միայն թուրքագետների, պատմաբանների, ցեղասպանագետների, քաղաքագետների, այլև մեր երկրի արտաքին քաղաքական գերատեսչության համար: Ատենախոսությունը օգտակար կարող է լինել նաև ՀՀ բուհերի համապատասխան մասնագիտությունների ուսումնական ծրագրերի իրականացման համար:

Ընդհանուր առմամբ, ատենախոսը կատարել է բավականին ծավալուն աշխատանք՝ ուսումնասիրելով Աբդուլ Համիդ II-ի գործունեության վերաբերող թուրքական հիմնական գրականությունը: Աշխատանքը կարևոր է թե՛ հայոց պատմության քննարկվող խնդիրների հետ կապված դիտանկյունները ըմբռնելու, թե՛

ժամանակակից Թուրքիայում տեղի ունեցող պատմական կերպաների ստեղծման և ընդհանուր հասարակական տրամադրվածությունները հասկանալու տեսանկյունից:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, համառոտագրությունների, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հեղինակը համակարգված ներկայացրել է թեմայի ուսումնասիրման արդիականությունը, կարևորությունը, առաջադրված խնդիրները, նպատակները, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Աբդուլ Համիդ II-ի հակասական քաղաքական կերպարի ձևավորումը», նախ ներկայացված է օսմանյան սուլթանի կերպարի արտացոլումը ժամանակակիցների հուշերում: Հեղինակը փորձել է նաև այդ հուշագրական երկերի քննություն իրականացնել: Այնուհետև անդրադարձ է կատարվել XX դ. առաջին կեսի թուրքական պատմագրության մեջ Աբդուլ Համիդ II-ի կերպարի արտացոլմանը: Ատենախոսը հիմնավորում է, որ այս տարիներին պետական վերահսկողության ներքո տեղի է ունեցել սուլթանի կերպարի և գործունեության բացասական ներկայացում:

Երկրորդ գլխում՝ «Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի վերափոխումը թուրքական պատմագրության մեջ (XX դարի 50-90-ականների սկիզբ)», նախ խոսվում է թուրքական պատմագրության մեջ սուլթանի կերպարի փոփոխության առաջին փորձերի մասին: Ապա ատենախոսը առանձնաբար ներկայացնում է նշված ժամանակաշրջանում թուրքական պատմագրության մեջ Աբդուլ Համիդ II-ի ներքին և արտաքին քաղաքականության գնահատականները: Այստեղ նկատվում են Աբդուլ Համիդ II-ին դրական գույներով ներկայացնելու միտումներ: Այս գլխի վերջում հեղինակն անդրադառնում է նաև թուրք պատմաբանների կողմից Աբդուլ Համիդ II-ի «հայկական քաղաքականության» գնահատականներին, որոնք առանց բացառության տեղավորվում են թուրքական ժխտողական ավանդական քաղաքականության շրջանակներում:

Երրորդ գլխում՝ «Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարը XX դարավերջի - XXI դարասկզբի թուրքական պատմագրության մեջ», ներկայացվում են օսմանյան սուլթանի կերպարի փոխակերպումները թուրք հասարակական-քաղաքական

զարգացումների համապատկերում: Գովելի է ատենախոսի կողմից առանձին ենթազլխով Աբդուլ Համիդ II-ի և Ռ.Թ. Էրդողանի կերպարների միջև զուգահեռներ անցկացնելու թուրք պամաբանների փորձին անդրադառնալը:

Եզրակացության բաժնում ամփոփված են ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները:

Վերոնշվածի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքում առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Թեկնածուական ատենախոսության Ներածության բաժնի «Օգտագործված գրականության և աղբյուրների տեսություն» հատվածում ցանկալի կլիներ նախ ներկայացնել ու վերլուծել թուրքական աղբյուրները, ապա հիմնական գրականությունը:

2. Ատենախոսությունը մեծապես կշահեր, եթե հեղինակը սկզբում ամփոփ ձևով ներկայացներ Թուրքիայում պատմագիտական մտքի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, որն ավելի հասկանալի կդարձներ Աբդուլ Համիդ II-ին վերաբերվող ուսումնասիրությունների բնույթը, դրանց քաղաքական ու պատմագիտական ենթատեքստերը:

3. Ատենախոսն օգտագործել է Աբդուլ Համիդ II-ի վերաբերյալ նրա աղջիկների, բժիշկների և իր՝ սուլթանի թողած հուշագրությունները, սակայն, ամբիոնի կարծիքով, բացթողում է ժամանակի մեկ այլ նշանավոր գործչի՝ Ահմեթ Ջելդեթ փաշայի թողած ստեղծագործությունները չօգտագործելը: Ահմեթ Ջելդեթ փաշան մի շարք կարևոր պաշտոններ է զբաղեցրել, այդ թվում Աբդուլ Համիդ II-ի օրոք, ուստի նա տիրապետում էր սուլթանի գործունեության վերաբերյալ ավելի լայն տեղեկատվության, հետևաբար նրա թողած վկայությունները ևս մեծ արժեք ունեն և արժանահիշատակ են: Նա թողել է երկու խոշոր երկեր՝ «Tezakir» (Հուշագրություններ) և «Maruzat» (Բացահայտում), որոնցում Աբդուլ Համիդի կառավարման շրջանի վերաբերյալ ընդարձակ տեղեկություններ կան: Ավելին՝ նրա դուստր Ֆաթմա Ալիյեն թողել է «Ահմեթ Ջելդեթ փաշան և նրա ժամանակը» գործը, որտեղ կրկին անդրադառնում է Աբդուլ Համիդի ժամանակաշրջանի ներքին ու արտաքին քաղաքական իրադարձություններին:

4. Ատենախոսը Աբդուլ Համիդ II-ի ներքին քաղաքականության մեջ հիմնականում նշում է բարեփոխումների քաղաքականության մասին, սակայն աշխատանքն ավելի կշահեր, եթե ավելի մեծ տեղ հատկացվեր ազգային խնդիրների քննարկմանը, մասնավորապես բալկանյան ժողովուրդների նկատմամբ կիրառված քաղաքականությանը:

5. Ցավոք, սահմանափակ է նաև արտաքին քաղաքականության վերաբերյալ թուրքական պատմագրության կողմից քննարկումներին անձրադարձը: Աշխատանքն ավելի կշահեր, եթե ավելի մեծ տեղ հատկացվեր Աբդուլ Համիդի արտաքին քաղաքականությանը, մասնավորապես Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի հետ ունեցած խնդիրներին, համագործակցություններին և սուլթանի կողմից բրիտանական ազդեցությունը հավասարակշռելու քաղաքականությանը:

6. Վերջին տարիներին Թուրքիայի պատմագիտական քննարկումներում առաջ են մղվում Օսմանյան կայսրության հանդուրժողականության վերաբերյալ թեզերը, այդ թվում Աբդուլ Համիդ II-ի ժամանակաշրջանի հետ կապված, ուստի կարելի էր այս խնդրին ևս անդրադառնալ՝ վեր հանելով իրական նպատակները և քաղաքական ենթատեքստերը:

Ամփոփելով նկատառումները, հարկ է նշել, որ վերոնշված նկատառումներն ունեն մասնակի և խորհրդատվական բնույթ և բնավ չեն կարող ազդել Տաթևիկ Հակոբյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արժանիքների վրա:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլվում են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության թեման ու բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Այսպիսով, Տաթևիկ Վասակի Հակոբյանի «Սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի արտացոլումը թուրքական պատմագրության մեջ (XX դ. II քառորդ – XXI դ. սկիզբ)» թեմայով ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն: Իսկ հետազոտության արդյունքները պատմագիտության և պատմության

դասավանդման ոլորտի համար ունեն կարևոր նշանակություն: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Տաթևիկ Վասակի Հակոբյանի «Սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի արտացոլումը թուրքական պատմագրության մեջ (XX դ. II քառորդ - XXI դ. սկիզբ)» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած Է.00.05 - «Պատմագիտություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:


Ատենախոսությունը քննարկվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2024 թվականի մայիս 2-ի նիստում, որին մասնակցել են ամբիոնի վարիչ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Ստեփանյանը, ամբիոնի դոցենտներ պատմական գիտությունների թեկնածուներ Ն. Մինասյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գրիգորյանը, Մ. Մարտիրոսյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Հ. Պապոյանը:

Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝

 Խ. Ստեփանյան

Խ. Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՊՄՀ գիտ. քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ



 Մ. Իսախիրյան